ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 25 ՏԱՐԻՆ ԵՎ ՆՐԱ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայկական ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադ. Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը և սովետական կարգերի հաստատումը նոր լուսավոր ուղի բացեցին հայ ժողովրդի առաջ։ Ապահով կյանք, խաղաղություն և ազնիվ աշխատանք Սովետական Միության ժողովուրդների բազմազգ ընտանիքում՝ ահա այն նախապայմանները, որոնց շնորհիվ մեր ժողովուրդը կարողացավ ավելի քան երբևիցէ ծավալել իր մշակույթի զարգացումը։ Հնարավոր դարձավ ոչ միայն վերացնել անգրագիտությունը, ապահովել ընդհանուր ուսուցումը, բացել և հետագայում ընդլայնել բազմաթիվ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ, այլև կենտրոնացնել ժողովրդի ուշադրությունը գիտության զարգացման շուրջը, Հայաստանում զարգացնել ժամանակակից գիտությունը։ Հասկանալի է, որ գիտության զարգացման աստիճանի մասին չի կարելի դատել վիճակագրական, այսինքն քանակական տվյալների հիման վրա։ Սակայն երբ մենք նկատի ենք առնում, որ հեղափոխությունից առաջ Հայաստանում գիտական աշխատողների քանակը կարելի էր հաշվել մատների վրա, երբ հիշում ենք, որ այդ քանակությունը Հայրենական պատերազմի պահին հասել էր շուրջ մեկ հազարի, իսկ այժմ մոտենում է մոտ 10 հազարի, ապա մենք կարող ենք գնահատել այն անսահման հնարավորությունները, որ ձեռք է բերել Հայաստանը գիտական աշխատանքի բնագավառում։ Ընդգծենք նորից, որ գիտության մեջ քանակական տվյալները վկայում են լոկ հնարավորությունների մասին, իսկ նրա զարգացման աստիճանը բնորոշվում է առաջին հերթին գիտական արտադրանքի մակարդակով, նրա որակով, նրա տեսական և գործնական նշանակությամբ, այն տեսակարար կշռով, որ ունի մեր գիտությունը Սովետական Միության և համաշխարհային գիտության մեջ։

Արդի գիտության զարգացումը անհնարին է առանց գիտական աշխատանքի պատշաճ կազմակերպման և ուժերի համախմբման։ Ահա թե ինչու հանրապետության կյանքում բացառիկ նշանակություն ունեցավ այն փաստը, որ 1935 թ. ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան հանրապետական կառավարության աջակցությամբ ստեղծեց այստեղ իր մասնաճյուղը՝ ՍՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալը, որը հետագայում, մանավանդ այն ժամանակվանից, երբ մասնաճյուղը ղեկավարեց ականավոր գիտնական և մեծ հայրենասեր ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, վերածվեց սովետահայ գիտության իսկական կենտրոնի։ Միաժամանակ պետք է նշել, որ նախապատերազմյան տարիներին շատ արագ աճում էին մեր բարձրագույն ուսումնական հաստատությունները։ Այդ բոլորը ստեղծեցին նախապայմաններ, որ Հայաստանում ազգային գիտությունների ակադեմիա հիմնադրվի։ Խնդիրը հասունացել էր արդեն 1941 թ., սակայն պատերազմը հետաձգեց դրա իրականացումը։ Պատերազմը մեծ վնաս հասցրեց նաև մեր գիտության

զարգացմանը։ Ամենամեծ վնասն այն էր, որ հայրենիքի համար մղված կռիվներում զոհվեցին բազմաթիվ խոստումնալից, երիտասարդ գիտական աշխատողներ, որոնց գիտական ստեղծագործությունից շատ բան էր սպասվում։ Նրանք փառքով պսակեցին իրենց անունները, կտակելով մեզ ավելի մեծ թափով շարունակել գիտության զարգացման գործը Հայաստանում։ Մյուս կողմից, պատերազմի հետևանքով Հայաստան էին տեղափոխվել բազմաթիվ գիտական աշխատողներ և բարձրորակ մասնագետներ ՍՍՀՄ գիտական տարբեր կենտրոններից, մի հանգամանք, որը թույլ տվեց որոշ բնագավառներում ավելի ուժեղացնելու գիտական աշխատանքները։ Տեղում մնացած գիտական աշխատողները լարում էին բոլոր ուժերը իրենց հայրենանվեր աշխատանքով մեր զինված ուժերին օգնելու համար։ Հայրենասիրական ոգևորության շնորհիվ գիտական աշխատանքը ուժեղացավ ավելի, քան պատերազմի նախօրյակին էր, որի շնորհիվ հնարավոր դարձավ գիտությունների ակադեմիայի կազմակերպումը։ Պարզ է, որ ակադեմիայի կազմակերպումը կապված էր նյութական խոշոր ծախսերի հետ։ Ցմոռանանք, որ պատերազմի հետևանքով երկրում ստեղծվել էին շատ դժվար նյութական պայմաններ։ Երկրի զգալի մասը ավերվել էր գերմանական զավթիչների կողմից։ Սակայն և՛ սովետական կառավարությունը, և Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմն ու կառավարությունը կանգ չառան այդ դժվարությունների առաջ։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրումը 1943 թ. նոյեմբերին, պատերազմի ահեղ օրերին, հանդիսացավ սովետական ազգային քաղաքականության ամենահամոզիչ հաղթանակներից մեկը, հանրապետությունում մեծ խանդավառություն առաջացրեց և Հայաստանի գիտության առաջ բացեց նոր հորիզոններ։ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը մեծագույն հոգատարություն և ուշադրություն էր ցուցաբերում ակադեմիայի կազմակերպմանը։ Հսկայական նշանակություն ունեցավ այն, որ գիտական ծրագրային և կազմակերպչական բոլոր հարցերով անմիջապես զբաղվում էր մեր ակադեմիայի հիմնադիրը և առաջին պրեզիդենտը՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին։ Գիտական աշխատանքի նկատմամբ նրա բարձր պահանջկոտությունը և խստությունը հենց սկզբից ապահովեցին բոլոր հարցերի լուծումը բարձր մակարդակով։ Դրա շնորհիվ մեր ակադեմիան մինչ այսօր էլ զգալի չափով ազատ է գավառականությունից, մի վտանգ, որի վրա միշտ ուշադրություն էր դարձնում մեր առաջին պրեզիդենտը։ Այսօր մի անգամ ևս հետադարձ հայացք ձգելով այն սկզբունքների վրա, որ ակադեմիկոս Օրբելին ջանում էր դնել նոր ակադեմիայի հիմքում, մենք կարող ենք նշել, որ նա ելնում էր միշտ տեսակետներից։ Ահա թե ինչու նրա անունը մեր ակադեմիայում միշտ կհիշվի ակնածանքով ու սիրով։ Օրբելին պահանջում էր, որ գիտության տարբեր ճյուղերը զարգանան համաչափ, ըստ որում հաշվի տոնվեն ինչպես հանրապետության կարևորագույն կարիքները, այնպես էլ սովետական գիտության զարգացման ընդհանուր սկզբունքները։

Բարձր գնահատելով ակադ. Հովսեփ Օրբելու խոշոր ծառայությունները Հայաստանի գիտության առաջ, մեր ակադեմիան պետք է պատշաճ միջոցներ դտնի հավերժացնելու նրա հիշատակը։

Հաղթանակով ավարտվում էր Հայրենական պատերազմը, որին մեծ ոգևորությամբ մասնակցեցին նաև Հայաստանի խիզախ որդիները։ Երկիրը

պատրաստվում էր խաղաղ պայմաններում ծավալելու հսկայական շինարարական ծրագրեր։ Մասնավորապես Հայաստանում ամենուրեք զգացվում էր տնտեսական զարգացման արագ տեմպերի անհրաժեշտությունը։ Պարզ է, որ Հանրապետության ժողովրդական տնտեսության նոր վերելքը պետք է հիմնվեր առաջին հերթին ինդուստրացման նոր, լայն ծրագրերի իրականացման վրա։ Այսօր արդեն կարելի է նշել, որ մեր Հանրապետությունը անցյալում ոչ միայն իրագործեց զարգացման հսկայական ծրագրեր, այլև բառի բուն իմաստով հզոր վերելք ապրեց։ Հանրապետության բնակչությունը 1943 թ. համեմատությամբ այժմ համարյա կրկնապատկվել է։ Արդյունաբերական արտադրանքը ավելի քան 16 անգամ այսօր գերազանցում է մինչպատերազմյան մակարդակը։ Առաջադիմել է գյուղատնտեսությունը, բոլորովին փոխվել է գյուղի դեմքը։

Մեծագույն նշանակություն տալով Հայաստանում արդյունաբերության զարգացմանը, իր գոյության առաջին տարիներից սկսած մեր ակադեմիան մեծ ուշադրություն դարձրեց ֆիզիկա-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների զարգացման վրա, գիտակցելով, որ այն ժամանակ մեր Հանրապետության գիտությունը շատ խիստ հետ էր մնացել այդ բնագավառներում մի շարք այլ հանրապետական ակադեմիաներից։ Առաջնահերթ զարգացում ստացավ ֆիզիկան։ Հիմնադրվեցին Բյուրականի աստղադիտարանը, մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտը, հետագայում՝ նաև հաշվողական կենտրոնը, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը, Բյուրականի օպտիկա-մեխանիկական լաբորատորիան, ՀՍՍՀ ակադեմիայի ընդերքում աճած ֆիզիկայի ինստիտուտը։ Մի շարք տեխնիկական գիտությունների հիմնարկներ կամ կազմակերպվեցին սկզբում ակադեմիայում և հետո հանձնվեցին արդյունաբերությանը, կամ ուղղակի կազմակերպվեցին գերատեսչությունների ցանցում, ակադեմիայի աջակցությամբ։

Ֆիզիկա-տեխնիկական և մաթեմատիկական գիտությունների ասպարեզում աշխատող ոչ բոլոր ինստիտուտներն են այսօր կարողանում ապահովել առաջավոր դիրքերը սովետական գիտության մեջ, սակայն նրանք բոլորը կատարում են կարևոր հետազոտություններ, աշխատում են ակտուալ թեմաների վրա։ Ավելին. նրանց թվում կան հիմնարկներ, որոնք աչքի ընկնող դիրքեր են գրավել գիտության մեջ։ Աստղագիտության նորագույն բաժնի՝ արտագալակտիկ աստղագիտության բնագավառում Բյուրականի աստղադիտարանը Միության մեջ առաջատար տեղ է գրավում։ Բյուրականում ծնունդ առած այնպիսի նոր գաղափարներ և տերմիններ, ինչպիսիք են՝ աստղասփյուռներ, տրապեցիայի տիպի սիստեմներ, գալակտիկաների կորիզներ, կորիզների ակտիվություն, Մարդարյանի գալակտիկաներ, գերաստղասփյուռներ,— մտել են միջազգային գիտական գրականության ընդհանուր գործածության մեջ։ Արդեն այդ հանգամանքը ցուցանիշն է այն ազդեցության, որ ունի մեր այդ հիմնարկը աստրոֆիզիկայի զարգացման վրա։

Ֆիզիկոսներին հաջողվել է զարգացնել տարրական մասնիկների ուսումնասիրության նոր մեթոդներ, որոնք ծնունդ են առել մեզ մոտ, կարևոր արդյունքներ ստանալ տեսական ֆիզիկայի ասպարեզում։ Լայն ճանաչում են գտել Հայաստանի մաթեմատիկոսների աշխատությունները ֆունկցիաների տեսության բնագավառում։ Հայաստանում մեծ գործ է կատարվել մաթեմատիկական հաշվիչ մեքենաների ստեղծման ուղղությամբ։ Մենք պարտավոր ենք հե-

տագայում ավելի ևս ուժեղացնել ուշադրությունը մաթեմատիկական նոր մեթենանէրի ստեղծման, արտադրության և կիրառության նկատմամբ։

Մեխանիկների աշխատանքը սկսվել և այժմ էլ շարունակվում է այնպիսի կարևոր բնագավառներում, ինչպիսիք են սողքի տեսությունը, թաղանթների և սալերի տեսությունը և այլն։ Այստեղ նույնպես նրանք մուծել են այնպիսի ավանդ, որը գնահատվում է մեր հանրապետության սահմաններից շատ հեռու։

Մեր գիտնականների կողմից ստեղծվել են կարևոր սարքեր, որոնք կիրառվում են կոսմիկական կապի բնագավառում, որտեղ մեր ռադիոֆիզիկոսները մեծ դեր են խաղում։

Այս քառորդ դարում Հայաստանի գիտնականները նպաստել են նաև տեխնիկական գիտությունների զարգացման գործին։

Ակադեմիայի գիտնականները մեծ դեր ունեցան ետպատերազմյան տարիներին Հայաստանում էլեկտրատեխնիկական, ռադիոտեխնիկական, էլեկտրոնային, սարքաշինական արդյունաբերության ստեղծման և զարգացման մեջ։ Հիմնականում մեր ակադեմիայի աշխատակիցների ջանքերով հիմք է դրված նաև օպտիկա-մեխանիկական արդյունաբերության զարգացմանը։ Կան առաջին հաջողությունները գիտական սարքաշինության բնագավառում։ Այստեղ պետք է նշել Բյուրականի օպտիկա-մեխանիկական լաբորատորիայի կողմից ստեղծված ավտոմատիկ միկրոֆոտոմետրը, որը, անշուշտ, լավագույնն է ժամանակակից նման գործիքների մեջ և մեծ պահանջարկ ունի։ Այժմ, երբ նոր չափողական ավտոմատ սարքերի ներդրումը և լայն կիրառումը դարձել են գիտության զարգացման նախապայմաններից մեկը, այդ գործը չափազանց կարևոր է։ Տարբեր երկրների գիտական մրցության մեջ հաղթելու համար մեր երկիրը պետք է ունենա ամենակատարյալ գիտական սարքերի արագորեն զարգացող արդյունաբերություն։ Հայաստանը կարող է և պետք է մեծ չափերով օժանդակի այս խնդրի լուծմանը, իր քաղաքներում ևս ստեղծելով համապատասխան ձեռնարկություններ։

Այս խնդիրը կարող է լուծվել և պետք է լուծվի միայն միութենական ընդհանուր ջանքերով, սակայն փորձը ցույց է տալիս, որ Հայաստանը կարող է խաղալ բավական մեծ դեր, որովհետև, ինչպես վերը տեսանք, անհրաժեշտության դեպքում ստեղծվում են բավական բարձրորակ սարքեր։ Գիտական սարքերի ստեղծման արդյունաբերության ծավալումը այսօրվա հրատապ պահանջն է։ Դա փաստորեն արդյունաբերության նոր ճյուղի ստեղծման հարց է, որը կապված է մեր հանրապետության ապագայի հետ, և, իհարկե, գիտնականների կարծիքը այս խնդրում չափազանց կարևոր է։ Ես կուզենայի մի երկու խոսք ասել այն տեսակետի մասին, որ մշակվել է արդյունաբերության զարգացման վերաբերյալ ակադեմիայում. մենք ստեղծել ենք փաստորեն շատ բազմաճյուղ արդյունաբերություն և, իհարկե, առկա է հսկայական առաջընթաց ետպատերազմյան այս շրջանում։ Սակայն այստեղ ամենակարևորը և ամենահետաքրքիրը այն է, որ ստեղծվել են արդյունաբերության նոր ճյուղեր և հետագայում ևս պետք է ստեղծվեն նոր ճյուղեր ու ուղղություններ։ Հետևաբար, եթե մեզ հաջողվի այնպես անել, որ նոր ուղղությունները, նոր ճյուղերը կազմակերպվեն այն բնագավառներում, որտեղ մենք կարող ենք կարճ ժամանակում հասնել բարձրագույն որակի, այդ դեպքում, իհարկե, մեր արդյունաբերության զարգացումը կունենա ավելի մեծ հաջողու-

թյուններ։ Դա կլինի իսկական կուլտուրական ճանապարհ արդյունաբերության զարգացման համար։ Դա հնարավոր է, որովհետև առանձին դեպքերում մեր հանրապետությունը հասնում է նման հաջողությունների։ Սակայն, ցավոք սրտի, մենք հաճախ շեղվում ենք այդ ճանապարհից. մի շարք ճյուղերում երկար տարիների ընթացքում պաշտոնապես պլանավորվում է վատորակ, տեխնիկապես հնացած արտադրանք։ Օրինակները շատ են, և ով որ գործ ունի գիտական-արտադրական հարցերի հետ, գիտե այդ օրինակները։ Բոլորիս հայտնի է, որ Երևանի Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի արտադրած խառատային հաստոցը երկար տարիներ է, ինչ արտադրվում է նույն ձևով, և բոլոր սպառողները դժգոհ են այդ արտադրանքից։

Նույնպիսի բազմաթիվ փաստեր առկա ես նաև գիտական կադրերի ու մասնագետների պատրաստման բնագավառում։ Մեր հիմնական խնդիրը և մեր պատվի գործն է հասնել այն բանին, որ մեզ մոտ արտադրվող և պատրաստվող ամեն բան հենց սկզբից լինի բարձրագույն որակի, լինեն դրանք հաստոցներ թե գիտական կադրեր։ Հարցի այսպիսի դրվածքը ցույց է տալիս, թե ինչպիսի յուրձունքների ենք մենք հասել, որ կարող ենք այդպիսի նպատակ դնել մեր առջև։ Բայց այդ հարցը երբեմն չի լուծվում և դրա լուծումը մեծ ջանքեր է պահանջում, իսկ դա ցույց է տալիս, որ մենք ունենք շատ թերություններ և պետք է աշխատենք վերացնել այդ թերությունները։

Քիմիական գիտությունների բնագավառում դրությունը մի քիչ այլ է, որովհետև այդ բնագավառում մենք սկզբից ունեինք ավելի շատ կադրեր։ Այստեղ պետք է հիշել պրոֆ. Ս. Ղամբարյանի մինչակադեմիական շրջանի գործունեությունը և նրա ջանքերը քիմիան Հայաստանում զարգացնելու ուղղությամբ։ Իհարկե, դրանից հետո մենք շատ ենք առաջ գնացել, բայց այդ առաջին ջանքերը չպետք է մոռացվեն։ Այժմ մենք կարող ենք պարծանքով ասել, որ Հայաստանում քիմիան բազմաճյուղային է և մենք շատ խոշոր հաջողություններ ունենք։

Մեծ հաջողություններ ունենք անօրգանական քիմիայի բնագավառում։ Իր ժամանակին ակադեմիայի կողմից առաջ քաշվեց Հայաստանի հսկայական հանքային հարստությունների օգտագործման հարցը, որը անցյալում միայն մասնակի լուծում ստացավ։ Մեր գիտնականների ստացած արդյունքները թույլ տվեցին դնել մի շարք արտադրությունների հիմքերը։ Այժմ կարևոր հարցերից մեկն է երևանիտից օպտիկական ապակի ստանալու խնդիրը, որը գիտականորեն փաստորեն լուծված է և կունենա ժողովրդա-տնտեսական հսկայական նշանակություն, եթե մեզ հաջողվի այն հետևողականորեն իրականացնել։

Նուրբ օրգանական քիմիայի ասպարեզում մենք ունենք հիանալի կադրեր, որոնք շատ գործ են կատարել ինչպես արտադրության հարցերի, այնպես էլ տեսական խնդիրների լուծման ուղղությամբ։ Շատ մեծ աշխատանք է կատարված նոր բարդ օգտակար միացությունների, մասնավորապես՝ շատ կարևոր և հետաքրքիր դեղանյութերի ստեղծման գծով։ Այդ աշխատանքները բարձր են գնահատվել մեր կուսակցության և կառավարության կողմից, իսկ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանին շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի պատվավոր կոչում։ Թե ինչքան է կարևոր նուրբ օրգանական սինթեզի բնագավառը, երևում է այն փաստից, որ, օրինակ, Հունգարիայում կա այդ ճյուղի չորս խոշոր գործարան, որոնցից յուրաքանչյուրում աշխատում են 5000

մարդ, դրից հազարը գիտաշխատողներ են։ Ուստի երբ ասում ենք «փոքր» քիմիա, դա որոշ իմաստով է միայն ճիշտ. դա չափազանց կարևոր բնագավառ է։

Մեզ մոտ զարգանում է քիմիայի մի նոր ուղղություն ևս՝ քիմիական տեխնոլոգիան։ Մենք պետք է ապահովենք այդ ուղղությունը բոլոր անհրաժեշտ պայմաններով, քանի որ այդ ասպարեզում Միության մեջ առաջատար դառնալու հնարավորություններ ունենք։

Բայց այստեղ մենք մի մեծ թերություն ունենք։ Դա այն է, որ չենք կարողանում մինչև վերջ հասցնել ներդրման գործը։ Այս տեսակետից մեծ մեղք ունեն մեր արտադրության ընկերները։ Պակաս դեր չեն խաղում նաև արտադրության կուլտուրայի բարձրացման հարցերը։ Մենք չպետք է կտրվենք կյանքից, որովհետև մեր ժողովուրդը շատ մեծ սպասելիքներ ունի գիտության մարդկանցից։ Մենք այդ սպասելիքները մասամբ արդարացնում ենք, բայց դեռ շատ բան ունենք անելու։

Քիմիայի բնագավառում մեզ մոտ ևս մեկ նոր ուղղություն է ստեղծվել՝ քիմիական ֆիզիկայի բնագավառը։ Դա քիմիական տարրական պրոցեսների ուսումնասիրությունն է։ Պետք է ասել, որ վերջին ժամանակները այս ասպարեզում մենք ունենք խոշոր հաջողություններ։ Այստեղ սպասվում են ոչ միայն տեսական մեծ արդյունքներ, այլև մեծ գործնական ելք։

Ակադեմիայում շատ բան է կատարված երկրաբանության բնագավառում։ Ամենախոշոր աշխատանքը այն է, որ կատարված են ընդերքի հարստությունների ընդարձակ ուսումնասիրություններ և ակադեմիայի աշխատանքները բազմաթիվ դեպքերում հիմք են ծառայում արդյունաբերական հետախուզական աշխատանքների համար։ Շատ հաճախ մեր ակադեմիան անմիջապես մասնակցում է կոնկրետ օբյեկտների ուսումնասիրության գործին։ Մասնավորապես հայտնի է մեր երկրաբանների մեծ աշխատանքը, որը կապված էր մոլիբդենային պաշարների հայտնագործման հետ։ Մեր փայլուն հաջողություններից մեկը այն է, որ մեզ մոտ հայտնաբերվեցին երկաթահանքի չափազանց հարուստ պաշարներ։ Ակադեմիան մեծ դեր է խաղացել նաև ոսկու հանքավայրերի հայտնաբերման հարցում։ Մեր գիտնականները կարողացան հերքել այն սխալ տեսակետը, թե Հայաստանում ոսկի չկա։ Մեծ է ակադեմիայի դերը ավելի նուրբ հարցերի, այդ թվում՝ ցրված և հազվագյուտ տարրերի ուսումնասիրության բնագավառում։

Որպես եզրակացություն պետք է ասել, որ Հայաստանը այսօր մեր Միության մեջ գուցե այն միակ տեղն է, ուր համեմատաբար փոքր տերիտորիայի վրա կենտրոնացած են հանքային մեծ հարստություններ։ Այդ տեսակետից մեր երկրաբանների խնդիրն է մտածել, թե ինչպես կարելի է ավելի խելացի ձևով օգտագործել այդ անսպառ հարստությունները։ Մեր գիտնականների առաջ այժմ ավելի դժվար խնդիրներ են դրված՝ ուսումնասիրել երկրի ավելի խորը շերտերը, այդ հարցում մեծ անելիքներ ունեն գեոֆիզիկոսները։ Մեր հանրապետության խոր ընդերքը քիչ է ուսումնասիրված։ Այդ տեսակետից մեծ նշանակություն ունեցավ մեզ մոտ իր ժամանակին գեոֆիզիկայի ինստիտուտի ստեղծումը, որը հենց սկզբից կանգնեց ճիշտ ճանապարհի վրա և տվեց առաջին կարևոր արդյունքները ինչպես երկրաշարժերի ուսումնասիրության գծով, այնպես էլ հանքային գեոֆիզիկայի բնագավառում։ Ստացվել են առաջին հուսադրող արդյունքները հանքային «կույր» մարմինների հայտնաբերման մե-

թոգների մշակման գործում։ Մենք մեծ ուրախությամբ ընդունեցինք գեոֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտը Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու լուրը։

Կենսաբանական գիտությունների դրությունը նույնպես այլ էր ակադեմիայի հիմնադրման պահին, քան, ասենք, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների բնագավառում։ Այստեղ առկա էին մեծ թվով գիտնականներ, ստեղծվել էին որոշ ավանդույթներ, և ակադեմիան շարունակեց ու զարգացրեց դրանք։

Մենք ունենք կարևոր արդյունքներ և այս բնագավառում։ Կատարվել են Հայաստանի բուսական աշխարհի լայնածավալ ուսումնասիրություններ, բույսերի ֆիզիոլոգիայի գծով հետազոտություններ և այլն։ Լավ արդյունք ունենք անտառապատման խնդիրների մշակման գծով։ Կարևոր և հետաքրքիր արդյունքներ են ստացվել գյուղատնտեսական կենդանիների հելմինթոզների դեմ պայքարի մեթոդների մշակման ուղղությամբ։ Կենսաբանության բնագավառում առանձնապես պետք է նշել մեր միկրոբիոլոգների հաջողությունները՝ միկրոբիոլոգիական սինթեզի, ինչպես նաև բույսերի պաշտպանության համար անհրաժեշտ պրեպարատների ստեղծման ասպարեզներում։ Միկրոբիոլոգիայի ինստիտուտը շատ մոտ է կանգնած արտադրության առաջ քաշած հարցերի լուծմանը, նա մեծ ներդրում ունի նոր ստեղծվող միկրոբիոլոգիական արդյունաբերության գործում։ Դա շատ կարևոր է, որովհետև, ինչպես ցույց է տալիս անցյալի փորձը, երբ կազմակերպվում է նոր արտադրություն, ապա շատ կարևոր է, որ ստեղծվի գիտական բարձր հիմքի վրա։

Մեր ակադեմիայի առանձնահատկություններից մեկը հատուկ սգրոքիմիական պրոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտի առկայությունն է։ Ինստիտուտը հաջողությամբ է զարգանում, այդեն առկա են կարևոր արդյունքներ։

Համեմատաբար ցածր մակարդակից այսօր շատ բարձր մակարդակի են հասել ֆիզիոլոգիայի բնագավառի աշխատանքները։ Հայաստանը այն կենտրոններից մեկն է, որտեղ, նորագույն մեթոդների կիրառմամբ, շատ մեծ հաջողությամբ կատարվում են ներվային համակարգության նուրբ պրոցեսների ուսումնասիրություններ։ Հետաքրքիր աշխատանքներ են իրականացվում նաև նեյրոբիոնիկայի բնագավառում, որոնցից է, օրինակ, պայմանական ռեֆլեքսների մոդելացման հարցը։

Բիոքիմիայի բնագավառում նույնպես մենք ունենք խոշոր հաջողություններ, մասնավորապես ուղեղի բիոքիմիայի ուսումնասիրման ասպարեզում։ Ճանապարհի սկզբում է գտնվում գենետիկայի զարգացումը։ Կարևոր աշխատանքներ են տարվում Սևանի հիդրոբիոլոգիական կայանում, որոնք անմիջական գործնական նշանակություն ունեն։ Վերջին ժամանակներս ակադեմիան հատուկ ուշադրություն է դարձրել կենսաբանական հիմնարկների նյութական բազայի բարելավման վրա։ Կառուցվել կամ կառուցվում են մի շարք ինստիտուտների շենքեր։ Այժմ մենք մեր ուշադրությունը կենտրոնացրել ենք հասարակական գիտությունների հիմնարկների նյութական բազայի բարելավման հարցերի վրա։

Մեզ մոտ հասարակական գիտությունների բնագավառի ինստիտուտները դեռ չեն կարողանում իրենց աշխատանքները ծավալել ժամանակակից տեխ-

նիկայի մակարդակի վրա և դրանք կոլեկտիվ դարձնել։ Հասարակական գիտությունների բնագավառում ավելի, քան որևէ այլ բնագավառում, մեր հանրապետությունը ունեցել է կարևոր գիտական ավանդներ։ Մեր ակադեմիան ունեցավ այն բախտը, որ հիմնադրման պահին նրա առաջին կազմի մեջ մտան մեր մշակույթի վերջին 100-ամյակի խոշորագույն այնպիսի մասնագետներ, ինչպիսիք էին հայագետներ Հ. Օրբելին, Հ. Մանանդյանը, Մ. Արեղյանը, Ս. Մալխասյանը, Հ. Աճառյանը և ուրիշներ։ Դրա շնորհիվ հայագիտությունը հենց սկզբից մեզ մոտ ստացավ մեծ կշիռ, և այդ ուղղությունը ակադեմիայի համար դարձավ ավանդական։

Դրա շնորհիվ ակադեմիան հայագիտության ասպարեզում ունեցավ մի շարք խոշոր հաջողություններ։ Ամենից շատ աչքի ընկան հնագիտության բնագավառում կատարված աշխատանքները։ Իհարկե, անցյալում էլ եղել են պեղումներ, բայց այդ աշխատանքները առավել ևս ծավալվեցին հետպատերազմյան շրջանում, դառնալով ավելի նպատակասլաց։ Այդ պեղումները դարձան Սովետական Միության մեջ ընդհանուր հետաքրքրության առարկա։

Մեծ քանակությամբ գրականություն է հրատարակված Սովետական Հայաստանի նոր շրջանի պատմության վերաբերյալ։ Մենք միշտ պետք է հիշենք այն բացառիկ դերը, որ ունի Հայաստանի XX դարի պատմությունը մեր ժողովրդի պատմական ճակատագրի հարցում։ Այս տեսակետից այդ շրջանին մեծագույն ուշադրությամբ վերաբերվելը մնում է անհրաժեշտություն և մենք պետք է շատ աշխատենք, որ ավելի խոր հասկանանք այն հսկայական նշանակությունը, որ ունի այս ժամանակաշրջանը։

Հասարակական գիտությունների բնագավառում աշխատող մեր գիտնականները դեռ շատ անելիք ունեն, և այն հանդամանքը, որ հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի պատրաստումը ձգձգվում է, մեզ շատ պետք է մտահոգի։

Լեզվաբանության գծով հսկայական աշխատանք է կատարված և շարունակվում է կատարվել։ Մեծ նշանակություն ունի հայոց լեզվի գիտական քերականության ստեղծման գործը։

Շնորհակալ գործ է կատարում գրականության ինստիտուտը, պատրաստելով և հրապարակելով հայ կլասիկների ստեղծագործությունների ակադեմիական հրատարակություններ։ Նրան հաջողվեց լավ որակով հրատարակել Ե. Չարենցի վեցհատորյակը։ Ինստիտուտում մեծ ուշադրություն է դարձվում գրական կապերի հարցի փրա։

Մեծ նշանակություն ունի տնտեսագետների աշխատանքը։ Այս դեպքում գուցե հաջողությունները դեռ համեստ են։ Այնուամենայնիվ մենք գտնում ենք, որ մեր տնտեսագետները կարողացել են մանրակրկիտ և լուրջ աշխատանք տանել և մոտ ապագայում պետք է սպասել կարևոր արդյունքների։

Առհասարակ պետք է նշել, որ մեր ակադեմիայում սկզբից բարձրացվել է այն հարցը, որ հասարակական գիտությունների մեջ ավելի արագորեն ներդրվեն քանակական մեթոդները։ Սակայն պետք է ասել, որ մեր հասարակագետները այդ ուղղությամբ դեռևս շոշափելի հաջողություններ չունեն։ Հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյում պետք է ընդգրկել այնպիսի մարդկանց, որոնք ակտիվորեն հետաքրքրվում են քանակական մեթոդների զարգացման հարցերով։

Ահա սրանք են այն հիմնական ուղղությունները, որ զարգացել են մեզ մոտ այս 25 տարվա ընթացքում։ Եթե մենք նայենք մեր անցած ուղուն հնգամյակ առ հնգամյակ, ապա կտեսնենք, որ ամեն անգամ հնգամյակից-հնգամյակ մեր աշխատանքը, և համապատասխանաբար ջանքերը, ուժեղացել են։ Բայց եղել են դեպքեր, որ որոշ բնագավառներում մենք նահանջել ենք։

Չպետք է մոռանանք նաև այն, որ երբ ակադեմիան հիմնադրվեց, Հայաստանում գիտությունը ամբողջապես կենտրոնացված էր այնտեղ։ Այժմ գիտությունների ակադեմիայից դուրս աշխատում են մի քանի անգամ ավելի շատ գիտական աշխատողներ, քան մեզ մոտ։ Ուրեմն շատ է ծավալվել գիտությունը մեր հանրապետությունում, և այստեղ մեծ դեր է խաղացել ակադեմիան, որը նպաստել է այս կամ այն ուղղության զարգացմանը և նոր հիմնարկների ստեղծմանը։

Սակայն մեր գիտությունը չի կարող հաջողությամբ առաջ շարժվել, եթե մենք կապված չլինենք սովետական ամբողջ գիտության հետ։ Մենք միշտ նշում ենք այն օգնությունը, որ ստացել ենք։ Մեր լավագույն կադրերը դատ հաճախ իրենց պատրաստությունը ստացել են Մոսկվայում, Լենինգրադում և ուրիշ գիտական կենտրոններում։ Սակայն արդեն ժամանակն է, որ մեր հանրապետական ակադեմիաները, այդ թվում նաև Հայաստանի ակադեմիան, ավելի սերտ և իսկական համագործակցություն կազմակերպեն Միության այլ գիտական հիմնարկների հետ։ Իհարկե, ինչ որ բան կատարվում է։ Բայց պետք է նշել, որ քիչ են այն դեպքերը, երբ կատարվում է իսկապես համատեղ աշխատանք այն իմաստով, որ աշխատողները մեկնում են հենց տեղում կատարելու համապատասխան փորձեր ու հետազոտություններ կամ դալիս են մեզ մոտ (որը ավելի հազվադեպ է)։ Դա մեծ թերություն է, որովհետև նորից ցույց է տալիս, որ գիտական աշխատանքի կազմակերպումը մեր ամբողջ երկրում դեռ պատշաճ բարձրության վրա չէ։ Գիտության զարգացումը պետք է հասցնի այն բանին, որ մարդիկ միավորեն իրենց գիտելիքները այս կամ այն գիտական դժվար պրոբլեմը լուծելու համար։ Այդպիսի համագործակցության հիմնական արդյունքը, վերջիվերջո, լինում է գիտական աշխատանքների բարձր մակարդակը։ Դրա վառ վկայությունն են տիեզերքի նվաճման բնագավառում մեր գիտնականների հիրավի խոշոր նվաճումները։

Մենք պետք է շարունակենք ավելի պահանջկոտ և ուշադիր հետևել այս հարցին։

Գիտական կապերի զարգացման ոլորտում մենք ունենք խոշոր առաջընթաց։ Մեր ակադեմիան թերևս առաջինն է հանրապետական ակադեմիաներից, որ ուղղակի համաձայնագիր է կնքել արտասահմանյան գիտությունների ակադեմիայի հետ՝ գիտական համագործակցության վերաբերյալ։ Խոսքս Հունգարիայի ակադեմիայի հետ կնքված համաձայնագրի մասին է։ Հանրապետական ակադեմիաներում դեռևս քիչ են արտասահմանյան գործուղումները, մենք պետք է պայքարենք այդպիսի գործուղումները ավելացնելու և մանավանդ երիտասարդ գիտական աշխատողներին երկարատև գործուղումների ուղարկելու համար։

Առաջին փորձերը ցույց տվեցին, որ մեր ակադեմիայի համար շատ կենսական և օգտավետ են գիտնականների փոխանակման նոր պաշտոնական համաձայնագրերը։ Այժմ օրակարգում է ԳԴՀ գիտությունների ակադեմիայի հրա-

վերով պատվիրակության ուղարկումը։ Արդեն մի շարք գծերով նախապատրաստվել են նյութեր և հույս ունենք, որ մեր այս երկրորդ փորձը կլինի ոչ պակաս նպատակասլաց և արդյունավետ։

Մենք ունենք նաև որոշ կապեր կապիտալիստական երկրների մի շարք գիտնականների և դիտական կենտրոնների հետ։ Այդպիսի գործնական կապեր ունի, օրինակ, Բյուրականի աստղադիտարանը Մեքսիկայի աստղադիտարանի հետ, որի հետ կատարվում են աշխատանքների սիստեմատիկ փոխանակում և գործիքների փոխադարձ օգտագործում։ Մենք համեմատաբար լավ համագործակցություն ունենք նաև ֆրանսիական աստղագետների հետ։ Պետք է ասել, որ արտասահմանյան դիտնականները բարձր են գնահատում մեր գիտնականների աշխատանքը. մեծ գոհունակությամբ պետք է նշել, որ Հունգարիայի պոլիտեխնիկական համալսարանը պատվավոր դոկտոր է ընտրել մեր Հանրապետության ակադեմիայի իսկական անդամ Ի. Վ. Եղիազարովին։

Այս տարի այստեղ կկայանա նաև դիտական միությունների միջազգային խորհրդի գործադիր կոմիտեի սեսիան, որի ընթացքում բացի խորհրդի նիստերից կլինեն նաև գիտական միջազգային համագործակցության մասին հրապարակային դասախոսություններ։

Մենք մեր առաջ հարց պետք է դնենք, թե ինչպես է զարգանալու մեր գիտությունը հաջորդ քառորդ դարում։ Իհարկե, գիտությունը մարդկային գործունեության այնպիսի բնագավառ է, ուր հեշտությամբ չի կարելի փոխել ուղղությունները։ Նոր ուղղությունների ստեղծումը կապված է նաև առանձին մարդկանց հետ, որոնք բացառիկ հետևողականությամբ և իրենց տաղանդի, էրուդիցիայի ուժով կարողանում են կարճ ժամանակամիջոցում ստեղծել նոր պայմաններ՝ այդ նոր գիտության զարգացման համար։ Դա դժվար գործ է և սկսված գործի նկատմամբ պահանջում է վերին աստիճանի նվիրվածություն ու կամք։ Այդ նոր ուղղությունները կառաջանան, մի կողմից, ֆունդամենտալ գիտությունների պահանջներից, մյուս կողմից՝ մեր Հանրապետության ժողովրդական տնտեսության պահանջներից։ Օրինակ, մեր Հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հետ կապված բոլոր տեխնիկական խնդիրները, որոնք չեն կարող մշակվել որևէ առանձին գերատեսչությունում, պետք է մշակվեն առաջին հերթին ակադեմիայի կողմից։ Այսպես, օրինակ, ոչ մի գերատեսչություն ինքնուրույնաբար չի կարող լուծել այնպիսի կարևոր մի հարց, ինչպիսին է մեր բացառիկ մոլիբդենային հարստությունների կոմպլեքսային օգտագործման խնդիրը։ Փաստ է, որ մեզ մոտ մոլիբդենային հանքանյութը դեռևս չի օգտագործվում որպես կոմպլեքսային նյութ։ Այդ պրոբլեմը կարող է հաղթահարվել միայն ակադեմիայում, և այդ նպատակով մենք հետագայում պետք է ունենանք հատուկ գիտահետազոտական հիմնարկ։

Այդպիսի հարցեր մեզ մոտ կծագեն նաև հետագայում։

Պետք է նշել, որ հենց գիտական աշխատանքի բնույթը այս 25 տարիներում հիմնավորապես փոխվել է։ Այժմ մենք տեսնում ենք, որ փոքր կոլեկտիվները այնքան էլ էֆեկտիվ չեն, իսկ առաջ մենք ունեինք այն տեսակետը, որ պետք է ստեղծվեն փոքր կոլեկտիվներով ինստիտուտներ։ Անհրաժեշտ է ըստ ամենայնի ամրացնել եղած ուղղությունները, մենք չպետք է գնանք մեծ քանակությամբ նոր ինստիտուտների ստեղծման ճանապարհով, այլ պետք է ուժեղացնենք հները։

Պետք է շարունակել այն գործը, որ մեզ մոտ ավելի շատ նոր տեսակի ժամանակակից գիտական գործիքներ ստեղծվեն, որ Հայաստանում առհասարակ ստեղծվի գիտական գործիքների արտադրություն։ Մյուս կողմից, գիտական փորձերի բնագավառում նույնպես կատարվում են շատ մեծ փոփոխություններ։ Անհրաժեշտ է ունենալ բազմաթիվ, մեծաքանակ փորձեր, որոնց արդյունքները չի կարելի մշակել առանց այդ փորձերի ավտոմատացման։ Դա մեծ խնդիր է, որին մենք պետք է անպայման հետևենք մեծ ուշադրությամբ։ Մենք ունենք այստեղ մեծ հնարավորություններ, որովհետև մեզ մոտ կա մաթեմատիկական մեքենաների արտադրություն։ Այսպիսով, գիտական փորձերի ավտոմատացման պրոբլեմը մեծ պրոբլեմ է և այդ տեսակետից մեծ խնդիրներ են կանգնած մեր առջև։ Մենք նախապես պետք է մարդկանց սովորեցնենք, ընտելացնենք դրան, հակառակ դեպքում ետ կմնանք։

Այս հարցի լուծման համար մեծ նշանակություն ունի կադրերի ճիշտ ընտրությունը, հատկապես՝ օժանդակ կադրերի ճիշտ ընտրությունը։ Այժմ ակադեմիային գիտական փորձերի ավտոմատացման հարցերով զբաղվելու համար հարկավոր է ամենաքիչը 200 մասնագետ։ Այդ տեսակետից մեզ շատ պետք է օգնի բարձրագույն դպրոցը և հարց պետք է դնել, որ մեզ մոտ ստեղծվի ռադիոտեխնիկական ֆակուլտետ։

Մյուս հարցը, որի վրա անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել, դիտական հետազոտությունների արդյունավետության հարցն է։ Փաստ է, որ մեր հիմնարկների մի մասը դեռ չի տալիս անհրաժեշտ չափով գիտական արժեքներ և կամ այդ արժեքները չեն գտնում համապատասխան նպատակադիր կիրառում։ Մեր նպատակը պետք է լինի մեր հանրապետությունում ունենալ ամենաբարձր որակի գիտություն։ Դա շատ պատասխանատու և պարտավորեցնող խնդիր է։

Մենք շատ վատ վիճակում ենք հրատարակությունների տեսակետից։ Իհարկե, կատարվել է մեծ գործ, ստեղծվել են Հայաստանում առաջին գիտական պարբերական հանդեսները։ Եղած սիստեմը դեռևս բավարար չէ և նրանց ցանցը պետք է վերանայել։ Մենք պետք է մեր ամենօրյա պահանջկոտությամբ բարձրացնենք մեր հանդեսների մակարդակը, որպեսզի նրանց ամեն մի համարը գիտական հասարակայնության կողմից սպասվի անհամբերությամբ։

Կա նաև մի ուրիշ խնդիր. այդ այն է, որ գիտական ինֆորմացիայի ժամանակակից ձևերը արդեն չեն բավարարում մեզ։ Այսօր այնքան շատ են հրապարակվում հանդեսներ, որ փաստորեն ստեղծվել է ինֆորմացիայի տարափ, որի տեջ մեր գիտությունը (և ընդհանրապես համաշխարհային գիտությունը) խեղդվում է։ Ուրեմն, բացի հին մեթոդներից (գիրք, հանդես և այլն) պետք է որոնել նոր մեթոդներ. օրինակ, տարածում է գտնում նախատիպերի տարածման եղանակը։ Պետք է պայքարել հանդեսների ոճի համար, հասնել այն բանին, որ նրանք գրեն ավելի հակիրճ ոճով։ Վերը ասածից հետևում է, որ մենք, որպես առաջնահերթ խնդիր, պետք է դնենք ակադեմիայի պոլիգրաֆ կոմբինատի ստեղծման հարցը։ Դա կապահովի մեր հրատարակությունների որակը։

Մենք մեծ ուշադրություն պետք է դարձնենք մեր գիտական արտադրանքի ներդրման հարցերի վրա։ Շատ հաճախ մեր գիտնականները, ավարտելով որևէ հետազոտություն և փորձելով այն ներդնել, այլևս հետամուտ չեն լինում այն մինչև վերջ հասցնելուն, և այդ արդյունքները հաճախ տարիներ ի

վեր չեն հասնում արտադրությանը։ Ամռանը ակադեմիայի և պետպլանի միացյալ խորհրդակցությունը ցույց տվեց, որ մենք շատ բան ունենք արտադրության մեջ ներդնելու, միայն թե դրանով պետք է լրջորեն զբաղվել և հետևողական լինել։

Ծանոթ լինելով մեր գիտական երիտասարդության ձգտումներին, նրանց անսահման սիրուն դեպի գիտությունը, դեպի աշխատանքը, մենք կարող ենք համարձակորեն նայել դեպի ապագան և համոզված լինել, որ կունենանք ավելի մեծ նվաճումներ և հաջողություններ։